ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ. հունիսի 28-ից 30-ը Բրյուսելում (Բելգիայի Թագավորություն) ՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի տեղակալ պարոն Խաչիկ Հակոբյանի գործուղման վերաբերյալ

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>**

   Խաչիկ Հակոբյան

2. **<u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>**

   ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ

3. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ</u>**

   Բրյուսել (Բելգիայի Թագավորություն)

   2017թ. հունիսի 28-ից 30-ը

4. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**

   Եվրամիության հանձնաժողով և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն

5. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>**

   Մասնակցություն ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի «Մասնավոր հատվածի ֆինանսավորման հասանելիության բարելավում Արևելյան գործընկերության և Կենտրոնական Ասիայի երկրներում էներգաարդյունավետության, կանաչ և ցածր ածխածնային աճի համար» թեմայով կոնֆերանսին:

6. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>**

   Կոնֆերանսի ընթացքում անդրադարձ կատարվեց կանաչ տնտեսության անցման ֆինանսավորումն ապահովելու համար շուկայի կապիտալի հավաքագրման ընթացքում ձեռք բերված փորձին, կանաչ ներդրումների համար մասնավոր ֆինանսների բացահայտման գործում պետական մարմինների դերին, միջազգային կլիմայական ֆինանսների ավելի

արդյունավետ կիրառման եղանակներին, ինչպես նաև քննարկվեցին նոր ուղիներ, մասնավորապես բանկային համակարգի և դրամավարկային քաղաքականության դերը «կանաչ» պարտատոմսերի օգտագործման և ինստիտուցիոնալ ներդրողների ներգրավման գործում բարձացնելու վերաբերյալ:

7. **ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Համաժողովի ընթացքում, ինչպես նաև «Կանաչ էկոնոմիկան Արևելյան գործընկերության երկրներում» (EaP Green) ծրագրի և Գերմանիայի կլիմայի միջազգային նախաձեռնության շրջանակներում տեղի են ունեցել հանդիպումներ և քննարկումներ կառավարությունների, միջազգային կազմակերպությունների, բանկերի, գիտական սեկտորի ներկայացուցիչների հետ: